ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Տիգրան Վանդունց, «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 03–24 հոկտեմբերի, 2026թ.
3. **Հրավիրող կողմը.**
   Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն:
4. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցել «Ռազմավարական համալսարանական գործընկերություններ» միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին (IVLP), որի նպատակն է բարձրագույն կրթության ոլորտի մասնագետներին հնարավորություն ընձեռել ծանոթանալու ԱՄՆ բուհերի կառավարման և զարգացման ժամանակակից մոտեցումներին, լավագույն ձեռքբերումներին, համալսարանների միջև ռազմավարական և միջազգային գործընկերությունների ձևավորման ու զարգացման փորձին:
5. **Քննարկված թեմաները.**
   - ԱՄՆ բուհերի կառավարման ժամանակակից մոդելները և ռազմավարական պլանավորումը. համալսարանական առաջնորդության, ինստիտուցիոնալ զարգացման և որոշումների կայացման առաջավոր մեթոդաբանությունները:
   - Միջհամալսարանական և միջազգային համագործակցությունների ձևավորում. տեղական ու միջազգային մակարդակներում կայուն ռազմավարական գործընկերությունների, համատեղ կրթական ու հետազոտական ծրագրերի ստեղծման փորձը:
   - Հետազոտական գործունեության և նորարարությունների խթանում. կրթության ու գիտական հետազոտությունների փոխկապակցումը, ինչպես նաև համալսարանական նորարարական կենտրոնների զարգացումը:
   - Բուհ-աշխատաշուկա կապի զարգացում. ուսանողների համար պահանջված գործնական կարողությունների, ձեռնարկատիրական հմտությունների ձևավորման և աշխատաշուկայի արդի մարտահրավերներին արձագանքելու մոտեցումները:
   - Ռեսուրսների ներգրավում և ֆինանսական կայունություն. բարձրագույն կրթության ոլորտում ֆինանսավորման բազմազանեցման, դրամաշնորհների հայթայթման, հետազոտական արդյունքների և նորարարությունների առևտրայնացման մեխանիզմները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Գործուղման շրջանակում հայաստանյան բուհերի ներկայացուցիչների այցելությունները և պաշտոնական հանդիպումները կազմակերպվել են ԱՄՆ-ի կրթական և նորարարական խոշորագույն կենտրոններ հանդիսացող քաղաքներում՝

- Վաշինգտոն (D.C.) - հանդիպումներ կրթական քաղաքականություն մշակող պետական մարմինների և միջազգային փոխանակման ծրագրեր համակարգող գործակալությունների ներկայացուցիչների հետ:
- Բոստոն, Դալաս և Սիեթլ քաղաքներ - աշխատանքային հանդիպումներ առաջատար համալսարանների, քոլեջների ղեկավար կազմերի ներկայացուցիչների և կրթական նորարարությունների պատասխանատուների հետ:

Նշված քաղաքներում այցելություններ են կազմակերպվել նաև հետազոտական և բիզնես կենտրոններ, հանդիպումներ են եղել համալսարաններին կից գործող տեխնոլոգիական հաբերի, ինկուբատորների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումների և կլոր-սեղան քննարկումների ժամանակ հայկական պատվիրակության անդամները ամերիկյան գործընկերներին տվել են իրենց հետաքրքրող բազմաբնույթ հարցեր, օրինակ, ինչպե՞ս կարող են համալսարանները սերտորեն համագործակցել մասնավոր հատվածի հետ, որպեսզի կրթական ծրագրերը համապատասխանեն աշխատաշուկայի իրական պահանջներին, ինչպես են կազմակերպվում բիզնեսի կողմից համալսարանական հետազոտությունների պատվիրակման և ֆինանսավորման մեխանիզմները և այլն: Տրվել են նաև համալսարաններում ստարտափների ստեղծմանը, գիտական լաբորատորիաների գործունեությանը, գիտնականների նորարարական գաղափարների առևտրայնացման ուղիներին, բուհերի հավատարմագրման մեխանիզմներին վերաբերող մի շարք հարցեր:

Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ներկայացուցիչներն իրենց ելույթներում և քննարկումներում ներկայացրել են ՀՀ բարձրագույն կրթության համակարգում ընթացող ներկայիս բարեփոխումները, օրենսդրական փոփոխություններն ու մարտահրավերները, ամերիկյան բուհերի հետ ակադեմիական շարժունության (ուսանողների և դասախոսների փոխանակման) նոր, ուղիղ կապերի հաստատման պատրաստակամությունը, ինչպես նաև ԱՄՆ-ում կիրառվող լավագույն կրթական ձեռքբերումները հայաստանյան բուհերում ներդնելու հնարավորությունները, ինչպես նաև միջբուհական կայուն ռազմավարական գործընկերություններ ձևավորելու տեսլականը:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Քանի որ IVLP ծրագիրն ուներ ճանաչողական և փորձի փոխանակման առաքելություն, այցելությունները կրել են հիմնականում ճանաչողական և

խորհրդակցական բնույթ, ուստի հանդիպումներն ընթացել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկման ձևաչափով՝ միտված հետագա գործակցության հեռանկարների նախանշմանը:

Ծրագրի այս փուլում պաշտոնական իրավական փաստաթղթերի ստորագրում կամ վերջնական որոշումների ամրագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԳՊՀ ռեկտոր Տիգրան Վանդունցը ծրագրին մասնակցել է որպես մարզային բուհի ղեկավար: Նա մասնակցել է ծրագրի շրջանակում նախատեսված բոլոր մասնագիտական հանդիպումներին, քննարկումներին և այցելություններին, ներկայացրել է ԳՊՀ-ի վերբերյալ հիմնարար տեղեկություններ, բուհի միջազգային համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև ուսումնասիրել է ԳՊՀ-ի համար կիրառելի առաջավոր փորձը:

Այսպիսով, IVLP ծրագրի մասնակցության արդյունքում հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալ ԱՄՆ բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման, ռազմավարական պլանավորման և ինստիտուցիոնալ զարգացման առաջավոր փորձին, ուսումնասիրել համալսարանների միջև միջազգային գործընկերությունների ձևավորման ու կայուն զարգացման մեխանիզմները, ձեռք բերել նոր կապեր և հիմքեր ստեղծել ԳՊՀ-ի միջազգային համագործակցության ընդլայնման համար, ուսումնասիրել ուսանողների և դասախոսների շարժունության հնարավորությունները: Ակնկալվում է գործուղման արդյունքում ձեռք բերված փորձը կիրառել ԳՊՀ-ի ռազմավարական զարգացման, կրթական ծրագրերի կատարելագործման, որակի ապահովման և միջազգայնացման գործընթացներում, ինչպես նաև նպաստել ԳՊՀ-ի՝ որպես տարածաշրջանային բուհի միջազգային տեսանելիության և գործընկերային կապերի ընդլայնմանը:

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
ՌԵԿՏՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՎԱՆԴՈՒՆՑ

27.10.2026թ.